

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ
(1860–1920 թթ.)

ՌՈՒԲԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հայ-անգլիական առնչությունները սկիզբ են առնում միջին դարերից: Սակայն դրանք ունեցել են էպիզոդիկ բնույթ՝ կապված այս կամ այն իրարարձույթյան հետ: Անգլիայում հայկական գաղութի սկզբնավորումը տեղի է ունենում շատ ավելի ուշ՝ XIX դ. 60-ական թվականների կեսերին, երբ վերջնականապես ձևավորվում է Մանչեստրի հայ գաղութը: 1866 թ. սեպտեմբերի 6-ին քաղաքի հայ համայնքը իր ազգային և եկեղեցական կյանքի կարգավորման համար գումարում է ընդհանուր ժողով և ընտրում համայնքի խորհուրդ, իսկ հոկտեմբերի 22-ին ժողովն ընդունում է համայնքի Կանոնագիրը: Տասնչորս կետերից բաղկացած այդ փաստաթուղթը կոչված էր կարգավորելու գաղութի ներքին կյանքը: Ընդ որում առաջին կետով մանչեստրահայերը լիակատար իրավունք ունեին ընտրելու իրենց քահանային¹: 1870 թ. քաղաքի հայ համայնքի միջոցներով կառուցվում է Սուրբ Երրորդություն եկեղեցին՝ Ապեր Բրուկ ստրիտի վրա, ոչ հեռու այն վայրից, ուր հիմնականում ապրում էին հայերը²: 1876 թ. ընդունվում է համայնքի ներքին կանոնների նոր ժողովածու՝ Կանոնադիր, որտեղ ավելի հստակեցված էր համայնքի պաշտոնատար անձանց գործունեության ոլորտը, սահմանված էին համայնքի գործերում նրանց իրավասությունները³:

«Արարատ» պարբերականում 1877 թ. հրապարակված տեղեկությունների համաձայն, այդ ժամանակ Մանչեստրում ապրում էին 80–90 հայեր, որոնց մեծ մասը եկել էր Թուրքիայից և Ռուսաստանից: Վ. Բաստամյանի 1877 թ. Լոնդոնից հղած թղթակցության համաձայն, մանչեստրահայերի մեծամասնությունը կազմում էին Կոստանդնուպոլսից և Իզմիրից գաղթածները, աննշան չափով նաև թիֆլիսահայերը⁴:

1870-ական թվականների կեսերին տեղի է ունենում լոնդոնահայ համայնքի ձևավորումը: Ընդ որում՝ հայերի թիվը Լոնդոնում, մշտական երթևեկի պատճառով, շարունակ փոփոխվում էր: Հայերը Լոնդոնում այդ ժամանակ ունեին առևտրական գրասենյակներ:

XIX դ. 90-ական թվականներին Մանչեստրի հայերի առևտրում կատարվում է որոշ փոփոխություն: Մինչ այդ Անգլիայում հայկական ֆիրմաները զբաղված էին առավելապես չթի առևտրով, որը նշված ժամանակից կորցնում է իր առաջատար նշանակությունը: Միևնույն ժամանակ հայերը հուլյաների հետ միասին շարունակում էին առաջատար դիրք զբա-

1 Մ ո լ շ Ե Ղ Ե պ ի ս կ ո պ ո ս. Մանչեստրի հայ գաղութը. Պոստոն, 1911, էջ 178:

2 Նույն տեղում, էջ 232:

3 Նույն տեղում, էջ 181:

4 «Արարատ», Ս. էջմիածին, 1877 թ. դեկտեմբեր, էջ 465:

ղեցնել Անգլիայի և Թուրքիայի միջև կատարվող առևտրում: Կոստանդնուպոլսում անգլիական փոխհյուպատոսի 1893–1897 թթ. վերաբերող հաշվետվության մեջ նշված էր, որ անգլիական ապրանքների ներմուծումը Թուրքիա, լիովին գտնվում էր հայերի և հույների, իսկ բամբակյա ապրանքներինը՝ միայն հայերի ձեռքում⁵: XIX դ. վերջերից ընդհուպ մինչև XX դ. 20-ական թվականները Մանչեստրի հայկական ֆիրմաները հիմնականում զբաղվում էին թեթև արդյունաբերության ապրանքների առևտրով, իսկ Լոնդոնի հայերի դործունեության գլխավոր ուղղությունը դարձել էին հայկական դորգերի արտադրությունն ու վաճառքը:

XIX դ. 90-ական թվականներին Օսմանյան կայսրության մեջ կատարված հայերի ղանգվածային ջարդերը խթանում են Անգլիայում հայերի թվաքանակի աճը՝ մոտ 10 տվյալներով, 1896 թ. Լոնդոնում հաստատված հայերի թիվը հասնում է 500 հոգու: 1899 թ. լոնդոնաբնակ հայերի հիմնական մասը կազմում էին բանվորները և ուսանողները: Դա 1898 թ. հանգեցրեց «Լոնդոնի հայ բանվորների և ուսանողների միության» ստեղծմանը:

Անգլիայի հայ համայնքների, մասնավորապես Մանչեստրի համայնքի տնտեսական դրույթները վատթարանում է, երբ 1914 թ. հոկտեմբերի վերջին Թուրքիան մտնում է պատերազմի մեջ. հայերը ձեռնարկ են գառնում են «Թշնամի հպատակներ»: Սակայն 1915 թ. հունվարի 7-ին Գաղտնի խորհրդի ընդունած որոշմամբ Թուրքահայաստակ հայերին տրվում են որոշակի իրավունքներ:

1918 թ. ամռանը Անգլիայում բնակվող հայերի թիվը կտրուկ կերպով ավելանում է, երբ Բաքվից Անգլիա են գալիս 900 հայ փախստականներ: Լորգերի պալատի որոշմամբ, նրանց տրվում են Թուրքահայաստակ հայերին վերապահված նույնպիսի իրավունքներ, այդ թվում նաև Մեծ Բրիտանիայի ցանկացած շրջանում բնակվելու հավաստագրեր: Նույն թվականին անվանի հայրենասեր Կարապետ Թումայանի նախաձեռնությամբ և մի քանի անդլիացիների աջակցությամբ Լոնդոնի Առևտրական պալատին առընթեր հիմնադրվում է «Անգլո-հայկական տնտեսական ասոցիացիա», որի նպատակն էր «Լոնդոնի առևտրական և ֆինանսական շրջանակներին շահադրգուել Հայաստանի ապագա հնարավորությունների մեջ»⁶: Սրան հաջորդում է 1920 թ. ապրիլին Բրիտանա-հայկական առևտրական պալատի ստեղծումը:

XIX դ. 60-ական թվականներին Մանչեստրում հայ գաղութի կազմավորմանը զուգընթաց աշխուժանում է նաև ազգային կյանքը: 1875 թ. Մանչեստրի հայերի ընդհանուր ժողովի որոշմամբ քաղաքում բացվում է ընթերցարան⁷: 1894 թ. ընթերցարան են բացում նաև լոնդոնահայերը:

1895 թ. Լոնդոն մշտական բնակության է տեղափոխվում Բաքու ընտանիքը՝ Աննա Բաքուցի երկու որդիների՝ Արամի (1876–1919 թթ.) և Արշակի (1879–1946 թթ.) հետ:

5 «Նոր կյանք», Լոնդոն, №14, 15 հունիսի 1899, էջ 218:

6 "Ararat", London, vol. VI, N63, January-February, 1919, p. 309.

7 Մ ո լ շ ե ղ ե պ ի ս կ ո պ ո ս. նշվ. աշխ., էջ 57:

Լոնդոնում փաստորեն գործում էին համայնքի երկու մշակութային կենտրոններ՝ նշված Միությանը զուգահեռ, 1894 թ. սկսած, նաև Լոնդոնի հայ ընթերցարանը: XX դ. սկզբներին այս երկու կենտրոնները միավորվում են և ընդունում «Միացյալ ընկերություն» անունը:

1909 թ. Մանչեստրում հիմնադրվում է «Առաջադիմական միություն» ընկերությունը, որի շնորհիվ քաղաքի հայ գաղութը վերջապես կարողանում է ընտրել տեղի եկեղեցու հոգաբարձուների նոր խորհուրդ: 1911 թ. Մանչեստրում արդյունաբերող Մ. Բակրջյանի ղեկավարությամբ տեղի հայ երիտասարդները ստեղծում են «Երիտասարդ հայերի ակումբ» ազգային լուսավորական ընկերությունը, որը հետագայում վերանվանվում է «Երիտասարդ հայերի ասոցիացիայի»⁹:

1912 թ. սկսած, Հայկական հարցի վերաբացման շրջանում, Անգլիայում հայ գործիչները, զգալով քաղաքական գործունեության ակտիվացման կարևորությունը, ձեռնարկում են «Միացյալ ասոցիացիայի» վերակազմմանը: Մշակվում է նոր ծրագիր, որտեղ ասված էր. «Այդ ասոցիացիան ստեղծված է երկու նպատակով՝ միավորելու բրիտանական մայրաքաղաքում ապրող բոլոր հայերին ու կապ հաստատելու բրիտանական հասարակության հետ, և այդ ձևով ստեղծելու մեծ համակրանքի զգացմունք երկու ժողովուրդների միջև»¹⁰:

Ինչպես ակնարկվեց, 1915 թ. հունվարի 7-ին ընդունված որոշմամբ, թուրքահայատակ հայերը Անգլիայում ստացան քաղաքացիական ազատության իրավունքներ: Ներքին գործերի նախարարության և ոստիկանական իշխանությունների համաձայնությամբ Մանչեստրում և Լոնդոնում ստեղծվեցին ներկայացուցիչների հայկական կոմիտեներ, որոնց իրավունք վերապահվեց իրենց դիմող հայերին տալ ազգային պատկանելության հավաստագրեր: Միայն ներկայացուցիչների հայկական կոմիտեներից ստացած հավաստագրերի ներկայացմամբ հայերը կարող էին Պետական ռեգիստրից ստանալ համապատասխան վկայագրեր: Մանչեստրում այդ կոմիտեների քարտուղարն էր Գ. Կեմբերյանը, իսկ Լոնդոնում՝ Գ. Մ. Գրեգորին: Վերջինս կոմիտեների գործունեությունը գլխավորում էր նաև ամբողջ Անգլիայում¹¹:

1916–1918 թթ. Անգլիայում վերջնական ձևավորում է ստանում հայկական մի նոր համայնք Սաուտպորտում՝ Մանչեստրին մերձակա ծովափնյա քաղաքում: Առաջին աշխարհամարտից հետո, երբ հայերի նշանակալից մասը հեռացել էր Մանչեստրից, 1920-ական թվականներին Սաուտպորտի հայ համայնքը շարունակում էր գոյատևել: Լոնդոնի անգլիալեզու «Մասիս» թերթի տվյալներով՝ 1931 թ. Մանչեստրում և Սաուտպորտում ապրում էին շուրջ 1000 հայեր¹²:

8 «Պատանի», Լոնդոն, 1902, №3, մարտ, էջ 43:

9 "Massis", London, vol. III, N4, February, 1931, p. 83.

10 "Ararat", London, vol. I, July, 1913, p. III.

11 Նույն տեղում, հ. II, №19, 1915, էջ 237:

12 "Massis", London, vol. III, N4, February, 1931, p. 83.

* * *

Ինչպես Հայկական մյուս գաղթօջախները, Անգլիայի Հայ Համայնքները նույնպես մշտական կապեր էին պահպանում Հայրենիքի հետ ու ամեն կերպ ջանում էին օգնություն ձեռք մեկնել իրենց արևմտահայ Հայրենակիցներին: Այսպես, օրինակ, այն բանից հետո, երբ 1874 թ. Վանի ու Մուշի շրջաններում բռնկվում է սով և Կ. Պոլսի Հայոց պատրիարքն ու սովի գծով ստեղծված Հանձնաժողովը գիմում են Մանչեստրի Հայ Համայնքին, սովյալներին օգնություն ցույց տալու խնդրանքով, քաղաքի Հայերը հիմնում են «Սովելոց Հանձնաժողովը», որը շուտով իր բաժանմունքն է բացում Լոնդոնում, ինչպես նաև հրապարակում է դիմում անգլիացիներին՝ խնդրելով օգնել Հայ սովյալներին¹³: 1874–1875 թթ. ձմռանը Հանձնաժողովը Կ. Պոլսի Հայոց պատրիարքին է ուղարկում 1000 ոսկե դրամ: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ևս Արևմտյան Հայաստանում բռնկվում է սով: 1880 թ. փետրվարի 18-ին Մանչեստրի Հայերի ընդհանուր ժողովի որոշմամբ Հավաքվում է 1800 ֆունտ ստեռլինգ և ուղարկվում սովյալներին:

1894–1896 թթ. Օսմանյան կայսրությունում մոլեզնած Հայկական կոտորածների ժամանակ Անգլիայի Հայ Համայնքները օգնության են Հասնում փախստական դարձած իրենց շատ Հայրենակիցների՝ այրի կանանց և որբ երեխաներին: Քանի դեռ Հայ որբերը Լոնդոնում գտնվում էին Փրկության բանակի խնամածության տակ՝ անհրաժեշտություն չկար որբանոց բացելու: Սակայն երբ 1897 թ. փակվում է «Հայկական տուն» կոչվող այդ որբանոցը, Կ. Թումայանը հիմնում է Անգլիայում առաջին Հայկական դպրոց-որբանոցը:

Օգնության գործը Մանչեստրում ընդունում է կոլեկտիվ բնույթ և հենց գրա շնորհիվ էլ ավելի շոշափելի արդյունքներ է ունենում: 1895 թ. Կ. Ա. Զորյանը այստեղ հիմնում է փախստականներին օգնող ընկերություն, որը կրում էր Մանչեստրում և Սառլսպորտում գտնվող Լևանտից ելած օտարերկրացիների միսիա անվանումը¹⁴: Այդ ընկերությունը գործնականում օգնություն էր ցույց տալիս ոչ միայն Հայ, այլև հույն և ասորի փախստականներին, որոնք հարկադրված էին հեռանալ Թուրքիայից: 1897 թ. Մանչեստրի Հայ Համայնքի քահանա Տ. Զուղայեցին, Համայնքի անդամների հետ միասին, Հավաքում և Թուրքիայի իրենց Հայրենակիցներին ուղարկում են անհրաժեշտ Հագուստներ: Նույն թվականին Մանչեստրի Համայնքը Կիպրոսում բացում է «Հայկական (ագգային) դպրոց և որբանոց»¹⁵: Տ. Զուղայեցու կողմից 1897 թ. ամռանը ստեղծված «Հայ որբերի օգնության կոմիտե»-ն իր վրա էր վերցրել այդ որբանոցի խնամակալությունը՝ նրա պահպանման համար Հավաքելով 300 ֆունտ ստեռլինգ: 1897 թ. Մանչեստրի Հայերի մի մասն էլ ստեղծում է Հայրենիքում գտնվող որբերին օգնող կոմիտե: Նրա անդամները իրենց վրա են վերցնում երեք որ-

13 Մ ու շ ե ղ Ե պ ի ս կ ո ս. նշվ. աշխ., էջ 56:

14 "Ararat", London, vol. V, N55, January, 1918, p. 290.

15 Armenian (National) School Orphanage at Nicosia (Cyprus), Manchester. 1899, p. 7.

բանոցների պահպանութիւնը մեկը Այնթափում, մյուս երկուսը Ջմյուռնիայում¹⁶:

Մանչեստրի հայերի «Կիպրոսի որբանոցի խնամակալական խորհուրդը» ամեն տարի հավաքում և որբանոցին է ուղարկում 200 ֆունտ ստեռլինգ: Խորհուրդը իր բաժանմունքներն էր բացել Եգիպտոսում և Ֆրանսիայում: 1898 թ. ամռանը խորհուրդը բաժանմունք է բացում նաև Լոնդոնում, որի նախագահն էր Լոնդոնում Իրանի փոխհյուպատոս Ն. Ներսիսյանը¹⁷: Կիպրոսի «Հայկական (ազգային) դպրոցը» նյութական լավ պայմանների շնորհիվ ուներ ուսումնական լայն ծրագիր և սեփական տպարան, որտեղ տպագրվում էին նրա ամենամյա հաշվետվութիւնները: Մանչեստրի հայ գաղութի բարեգործական նախաձեռնութիւնները շարունակվեցին նաև XX դ. սկզբին: Իր գոյութեան հինգ տարիներից հետո, 1901 թ. «Խնամակալական խորհուրդը», որն Այնթափում և Ջմյուռնիայում պահում էր երեք որբանոց, դադարեցնում է իր գործունեութիւնը: 1902 թ. դադարում է գոյատևել նաև «Հայկական (ազգային) դպրոցը և որբանոցը»: 1902 թ. հետո Կիպրոսի դպրոց-որբանոցը վերակազմավորվում է միջնակարգ ուսումնական հաստատութեան, իսկ Լոնդոնում մինչև 1907–1908 թթ. շարունակում էր գործել «Հայկական տուն» որբանոցը: 1903 թ. Լոնդոնում շարունակում էր գործել Հայ փախստականների օգնութեան ընկերութիւնը, որի հիմնադիրն ու նախագահը Ս. Սահունին էր¹⁸: Նա Լոնդոն էր եկել Անդրկովկասից, հատկապես բարեգործական ընկերութիւն կազմակերպելու նպատակով: 1907 թ. հուլիսի 1-ին Մանչեստրի հայ համայնքի ընդհանուր ժողովում որոշվում է տեղում հիմնել «Հայ բարեգործական ընկերութեան» բաժանմունք. այն բացվում է 1908 թ.: Բաժանմունքի նախագահ են ընտրվում Ա. Ժամկոչյանը և Մ. Իպլիկչյանը: 1910 թ. «Հայ բարեգործական ընկերութեան» Մանչեստրի բաժանմունքն արդեն ուներ 112 անդամ և իր վրա էր վերցրել Ադանայի կոտորածից հետո որբացած հայ երեխաների խնամքը¹⁹: 1908 թ. սկսած կարիքավոր հայերին օգնութիւն ցույց տալու գործում նկատելի է դառնում Վ. Զակիրյանի գլխավորած Մանչեստրի «Հայ տիկնանց ասոցիացիայի» գերը²⁰: 1913 թ. նոյեմբերին հիմնվում է «Լոնդոնի հայ տիկնանց միութիւն» բարեգործական ընկերութիւնը: Միութիւնը ընտրում է կոմիտե, որի նախագահն էր Ն. Գուդենյանը: Ընկերութեան նպատակը Արևմտյան Հայաստանում ապրող որբերին օգնելու համար միջոցներ հավաքելն էր²¹:

1915 թ. հունվարին Լոնդոնի «Միացյալ ասոցիացիան» հիմնում է հայ փախստականների օգնութեան հիմնադրամ, որի գանձապետ է նշանակվում Ա. Հակոբյանը: Հիմնադրամը հավաքված միջոցները գլխավորապես փոխանցում էր Էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոսի հիմնադրամին:

16 «Արարատ», 1893, №6, էջ 261:

17 "Arménie", Paris, 1899, N123, p. 2.

18 «Մշակ», 1903, №232:

19 Մ ու շ ե ղ ե պ ի ս կ ո պ ո ս. նշվ. աշխ., էջ 176–177:

20 "Massis", London, vol. III, N4, February, 1931, p. 83.

21 "Ararat", London, vol. I, N10, April, 1914, p. 335.

1915 թ. հունվարի 26-ին էջմիածին ուղարկված առաջին մուծումը կազմում է 4200 ֆունտ ստեռլինգ²²:

Երբ Անգլիայում հայտնի են դառնում Օսմանյան կայսրությունում հայոց ցեղասպանության մասին լուրերը, երկրում առավել ակտիվանում է Հայ համայնքների բարեգործությունը: 1915 թ. սեպտեմբերի 20-ին մանչեստրահայերի ներկայացուցիչները գիմում են քաղաքագլխին կոչ անելով իր լուծման մտցնել երիտթուրքական գազանություններից տուժող հայերի փրկության գործում²³: Թեև 1915 թ. հոկտեմբերին Լոնդոնում հիմնադրվում է «Լորդ քաղաքագլխի հայ փախստականների օգնության հիմնադրամը», որը փաստորեն դառնում է Հայ ժողովրդի օգնության համագային հիմնադրամ, սակայն Լոնդոնի համայնքի «Փախստականների օգնության հայկական հիմնադրամը» վճռում է շարունակել իր գործունեությունը նկատի ունենալով այն, որ հիմնադրամը սերտորեն կապված էր Հարավարևելյան Ասիայի Հայ համայնքների հետ, որոնք զգալի ներդրում ունեին Հայ ժողովրդի վիճակի բարվոքման գործում: 1915 թ. նոյեմբերին այդ հիմնադրամն արդեն ուներ 10000 ֆունտ ստեռլինգ:

1916 թ. հոկտեմբերին Անգլիայում բացվում է «Որբերի հատուկ հիմնադրամ»։ դրան նպաստում է «Մշակի» խմբագիր Ա. Առաքելյանի՝ Անգլիայի հայերին ուղղած նամակը: «Որբերի հատուկ հիմնադրամը» դառնում է Լոնդոնի հայկական հիմնադրամի բաժանմունքը: 1916 թ. նոյեմբերին այն հավաքում է 550 ֆունտ ստեռլինգ, իսկ նրա հիմնական դրամագլուխը հասնում է 78800 ֆունտ ստեռլինգի: Հայ փախստականներին օգնող լոնդոնյան հիմնադրամը 1919 թ. հունվարին ուներ 19000 ֆունտ ստեռլինգ, իսկ նրա բաժանմունքը՝ «Որբերի հատուկ հիմնադրամը»՝ 2300 ֆունտ ստեռլինգ:

1919 թ. մայիսին Անդրանիկի նախագահությանը Երևանում տեղի է ունենում արևմտահայ փախստականների առաջին համագումարը, որից հետո Անգլիայում գործող հայերի օգնության հիմնադրամներն սկսում են սերտորեն համագործակցել համագումարի տեղծած Հայ փախստականների խորհրդի հետ:

Լոնդոնի Հայ եկեղեցական խորհուրդը և «Միացյալ ասոցիացիայի» Գլխավոր խորհուրդը որոշում են բացել հատուկ հիմնադրամ, որի միջոցների մեծ մասը տրամադրվելու էր Սիրիայում, Միջագետքում և Իրանում ապաստանած Հայ որբերի օգնության նպատակին: Նոր հիմնադրամը, որի գանձապետը է. Բենլյանն էր, կոչվեց «Հայ ընդհանուր հիմնադրամ»²⁴: 1918 թ. վերջերին «Հայ ընդհանուր հիմնադրամը» հավաքեց 5000 ֆունտ ստեռլինգ. գումարը մուծել էին 80 հայեր: 1919 թ. փետրվարին Լոնդոնում տեղի ունեցավ Հայ բարեգործական ընդհանուր միության տեղական բաժանմունքի ընդհանուր ժողովը: Դրանից մի քանի տարի առաջ բացված այդ բաժանմունքը 1919 թ. ուներ 65 անդամ, որոնցից յուրաքանչյուրը տարեկան վճարում էր 89 ֆունտ ստեռլինգ անդամավճար: Մյուս հիմնադրամներից բացի՝ Մանչեստրի հայերը միաժամանակ շարունակում էին

22 Նույն տեղում, հ. II, № 20, փետրվար, 1915, էջ 289:

23 Նույն տեղում, հ. III, № 27, սեպտեմբեր, 1915, էջ 96:

24 Նույն տեղում, հ. VII, № 60, օգոստոս-սեպտեմբեր, 1918, էջ 131:

իրենց մուծումները Հայ ընդհանուր բարեգործական միության օգտին: 1919 թ. սկզբին Միության տեղական բաժանմունքն ուներ 126 անդամ, որոնք տարեկան մուծում էին 469 ֆունտ ստեռլինգ անդամավճար: Բաժանմունքի գանձապետն էր Մ. Օուենջյանը²⁵:

* * *

Անգլիայի հայոց քաղաքական գործունեությունը սկսվում է XIX դ. 60-ական թվականների կեսերից՝ Մանչեստրի հայ գաղութի վերջնական ձևավորումից հետո: Ըստ Կանոնագրի, այդ գաղութի ղեկավար մարմինը համարվում էր Ընդհանուր ժողովը, որը զբաղվում էր նաև արտաքին հարցերով: 1873 թ. հունիսին Մանչեստրի գաղութի ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծվում է պատվիրակություն, որը դիմավորում է Անգլիա ժամանած Իրանի շահին: Մինչ այդ՝ 1872 թ., Անգլիայում Իրանի դեսպան է նշանակվում Մելքում խանը (Հովսեփ Մելքոնյան): Այդ ժամանակից սկսած ընդհուպ մինչև XX դ. սկիզբը Անգլիայում Իրանի բոլոր դեսպանները հայեր էին²⁶: 1874 թ. Լոնդոնում մշտական բնակություն է հաստատում բողոքական քարոզիչ Կարապետ Հակոբյանը²⁷, որը դառնում է հայկական հայրենասիրական շարժման առաջատար գործիչներից մեկը Անգլիայում և մինչև XX դ. սկիզբը անմիջական մասնակցություն է ունենում այդ երկրում Հայկական հարցի զարգացման բոլոր իրադարձություններին:

Լոնդոնում ճանաչված հայրենասեր գործիչ էր Ա. Սեթ Աբգարը, որն իր հաճախակի հրապարակումների միջոցով ջանում էր անգլիացիներին ծանոթացնել հայ ժողովրդի հետ և առաջ բերել նրանց համակրանքը հայերի նկատմամբ²⁸: Լոնդոնում հայրենասիրական շարժման կազմակերպիչն ու ոգեշնչողը Զմյուռնիայից եկած Գարեգին Փափազյանն էր, որի աջակիցներից էր Զեյնա Բրայսը²⁹:

1877 թ. հայ հայրենասեր որոշ գործիչներ միավորվում են հասարակական-քաղաքական մի կազմակերպության մեջ, որն ստանում է «Արևելյան հարցի ընկերություն» անվանումը: Հարկ է նշել, որ մինչև 1877 թ., այսինքն՝ Հայկական հարցի բացումից մեկ տարի առաջ ստեղծված այդ կազմակերպությունը արևմտահայության ճակատագրի լուծումը կապում էր Արևելյան հարցի հետ: Կազմակերպության նպատակը արևելյան քրիստոնյաների արգի վիճակի ուսումնասիրումն էր և նրանց աղետալի վիճակի բարվոքմանն ուղղված միջոցառումների մշակումը³⁰: Ընկերության պատվավոր նախագահ ընտրվեց Ա. Սեթ Աբգարը, նախագահ՝ Գ. Ս. Պարոնյանը, իսկ դանձապետը դարձավ Պ. Գ. Սորգուկը:

Բեռլինի կոնգրեսին մասնակցելու համար, հայոց պատվիրակությունը Եվրոպա ուղարկելուց հետո, Անգլիա է դալիս հոգևորական Գ. Հովակիմ-

25 Նույն տեղում, մարտ-ապրիլ, 1919, էջ 363:

26 Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Պատմություն հայ գաղթականության. հ. Գ, մաս Ա, Կահիրե, 1961, էջ 279:

27 «Արարատ», 1875, դեկտեմբեր, էջ 470:

28 Նույն տեղում:

29 «Զարթոնք», 1989, № 92:

30 Հ. Տ եր - Պ ե տր ո ս յ ա ն. Զեյնա Պրայս և հայերը. Կահիրե, 1975, էջ 73:

յանը, որը խնդիր ուներ եվրոպական հայ գաղութներին իրազեկելու պատվիրակության առաքելության և նրա կողմից մեծ տերություններին դիմելու պլանների մասին: Այդ լուրն ավելի է խթանում Անգլիայի հայ հայրենասերների ակտիվությունը: Հանդես են գալիս նոր գործիչներ, որոնց թվում աչքի էր ընկնում Հովհ. Անդրեասյանը՝ Մանչեստրից:

1878 թ. մարտին Գ. Փափազյանը Լոնդոնում հրատարակում է «Կոնֆերանսը և հայերը» գրքուկը. անգլերեն լեզվով լույս տեսած այդ գրքուկը մեծ տերություններին ուղղված մի կոչ էր³¹:

1878 թ. մարտի 19-ին Լոնդոնում Զ. Բրայսի բնակարանում գումարվում է Հայկական հարցով շահագրգռված 29 գործիչների (որոնցից 9-ը հայեր էին) նիստ: Հարցի քննարկումը մասնակիցներին հանգեցնում է հասարակական-քաղաքական մի այնպիսի կազմակերպության ստեղծման գաղափարին, որը պետք է զբաղվեր Հայաստանում ենթադրվելիք բարենորոգումների ծրագրի ուսումնասիրությամբ: Կազմակերպությունը ստացավ «Անգլո-հայկական ասոցիացիա» անվանումը: Կազմակերպության նախագահ է ընտրվում լորդ Քարնարվոնը՝ գաղութների գործերի գծով նախկին պետական քարտուղարը, իսկ քարտուղար՝ Զ. Բրայսը: Ակնբախ էր, որ անգլիացի և հայ հայասեր ուժերի նման միաձուլումը մի կազմակերպության մեջ Անգլիայի հայ հայրենասերների կողմից միանշանակ չէր ընդունվի: «Ասոցիացիայի» ստեղծումից երեք օր հետո, 1878 թ. մարտի 22-ին, Հովհ. Անդրեասյանը Մանչեստրում ստեղծում է «Հայաստանի շահերին աջակցող ընկերություն»: Կազմակերպության հիմնադրումը ազդարարող շրջաբերականում Հովհ. Անդրեասյանը նշում էր, որ ընկերության «նպատակն է հայ ազգին իրական և ոչ վերացական կամ երևակայական շահերը պաշտպանել»³²:

1878 թ. ապրիլի 11-ին Լոնդոն են ժամանում հայոց պատվիրակ Մ. Խրիմյանը և նրա թարգմանիչ Մ. Ջերազը: Մ. Խրիմյանը տեղի հայրենասերներին հանձնում է Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանի կոնֆակը, որտեղ նա հորհորում էր նրանց օգնություն ցույց տալ Մ. Խրիմյանին:

1880 թ. ապրիլին Անգլիայում իշխանություն են գալիս լիբերալները՝ Ս. Գլադստոնի գլխավորությամբ: Անգլիայի հայ հայրենասերները աճապարեցին Գլադստոնին հիշեցնելու հայերին նրա տված խոստումների մասին: Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը 1880 թ. ապրիլի 30-ին Մ. Ջերազին ուղարկում է Լոնդոն գլխավորապես անգլիական պառլամենտում Հայկական հարցը բարձրացնելու նպատակով: Մ. Ջերազը Անգլիայում մնում է մոտ ութ ամիս՝ ձգտելով շահագրգռել անգլիացի գործիչներին Հայաստանի ճակատագրով:

1885 թ. սկզբին Մարսելում Մկ. Փորթուգալյանը հիմնադրում է «Հայերի հայրենասիրաց միությունը»³³: Նույն թվի մարտին կազմակերպության ընդհանուր ժողովը եվրոպական գաղթականության կենտրոնը համարում է Անգլիան, պայմանով, որ Լոնդոնի և Մանչեստրի հայ համայնքները

31 The Conference and Armenians, London, 1878, p. 17-18.

32 Մ ո լ շ ե ղ ե պ ի ս կ ո պ ո ս. նշվ. աշխ., էջ 75:

33 Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Մինաս Ջերազ. Կահիրե, 1927, էջ 249:

այդ հարցում գանձված փոխադարձ համաձայնությունները: Մանչեստրի հայ գաղութը անտեսում է այդ որոշումը, մինչդեռ Լոնդոնի համայնքը Կ. Հակոբյանի գլխավորությամբ ստեղծում է «Հայրենասիրաց ընկերություն հայոց ի Եվրոպա» կազմակերպությունը՝ ղեկավար կոմիտեով, որը գլխավորում էր Կ. Հակոբյանը, իսկ գանձապետը Պ. Աղանուրն էր:

1888 թ. փետրվարին «Հայրենասիրաց ընկերություն հայոց ի Եվրոպա» կազմակերպությունը որոշ փոփոխություններ է կրում, որ կապված էին Միհրան Սվազլյանի (Սվազլի) Լոնդոն գալու հետ. վերջինիս նպատակը Անգլիայում պրոպագանդայի ակտիվացումն էր: Մասնակի վերափոխություններից հետո կազմակերպությունը կոչ է անում Մանչեստրի և Լիվերպուլի հայերին միանալու իր գործունեությանը: Հայ գաղութների, մասնավորապես Լոնդոնի և Փարիզի հայերի միջև առավել սերտ կապեր հաստատելու միջոցով կազմակերպությունը աշխատում էր նոր մակարդակի բարձրացնել իր գործունեությունը եվրոպական երկրներում: Կատարված փոփոխությունների արդյունքում կազմակերպության քարտուղար է դառնում Մ. Սվազլյանը:

1888 թ. աշնանը տեղի է ունենում Լոնդոնի հայկական հայրենասիրական կազմակերպության նոր փոփոխություն. «Հայրենասիրաց ընկերություն հայոց ի Եվրոպա» կազմակերպությունը վերանվանվում է «Հայոց հայրենասիրաց ընկերություն»: Կազմակերպությունն ընդունում է իր կանոնների հավաքածուն կամ ծրագիրը, որը նպատակ ուներ «պրոպագանդայի բոլոր օրինական միջոցներով» պահանջել 1878 թ. Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի անմիջական և լիակատար իրագործում³⁴: 1888 թ. նոյեմբերի 1-ից Լոնդոնում սկսեց հրատարակվել ընկերության տպագիր օրգանը՝ «Հայաստան» լրագիրը:

Հայ հայրենասերները այն ժամանակ հավատում էին, թե բավական է որ իրենք դիմեն եվրոպական տերություններին, վերջինները չեն հապաղի կատարելու անհրաժեշտ քայլեր նրանց պահանջների բավարարման համար³⁵:

1889 թ. հոկտեմբերին Մ. Չերազը գաղտնի հեռանում է Թուրքիայից և կրկին գալիս է Անգլիա: Նա 1889 թ. նոյեմբերի 15-ից Լոնդոնում սկսում է հրատարակել «Արմենիա» ամենամսյա հանդեսը անգլերեն և ֆրանսերեն լեզուներով՝ հասարակությանը Հայկական հարցին ծանոթացնելու համար: Իր այդ հանգեսով Մ. Չերազը Անգլիայում հայերի գործունեության նոր հոսանքի սկիզբը գրեց³⁶:

«Արմենիայի» հրատարակման սկզբից ևեթ բրիտանացի հայասեր քաղաքագետները, մասնավորապես Ջ. Բրայսը, փորձեր են կատարում Լոնդոնի երկու հայկական հրատարակությունները միավորելու ուղղությամբ: 1889 թ. դեկտեմբերից այդ աղերսով նրանք բանակցություններ են վարում Հով. Պրուսալյանի և Մ. Չերազի հետ: 1890–1891 թթ. Լոնդոնի հայրենասիրական հրատարակությունների միավորման նոր փորձեր են կատարվում, Լոնդոն են դալիս Փարիզի հայոց ներկայացուցիչները: Սակայն այդ

34 «Հայաստան», Լոնդոն, 1888, № 1:

35 "Armenia", Boston, vol. II, N7, April, 1906, p. 8.

36 "Armenia", London, N72, 1984, p. 1.

փորձերը հաջողութեամբ չեն պսակվում: Թեև 1889 թ. հունիսին անգլիական քաղաքագետները «Հայաստան» թերթի նկատմամբ ստեղծել էին, այսպես կոչված, «Հովանավորական խորհուրդ», սակայն հայ ժողովրդի ազատագրութեան համար մղվող պայքարը հանգեցնում է այն բանին, որ Զ. Բրայսը 1890 թ. Լոնդոնում նորից հիմնում է Բրիտանական Հասարակական կազմակերպություն, որը կոչվում էր «Անգլո-հայկական ասոցիացիա», նմանը այն կազմակերպության, որը գոյություն ուներ Անգլիայում 1878 թ.: «Անգլո-հայկական ասոցիացիայի» նախագահ է ընտրվում Զ. Բրայսը, իսկ փոխնախագահ՝ Զ. Քալանթարյանը: Կազմակերպության ստեղծման առթիվ հրատարակված դիմումի մեջ հռչակված էին հետևյալ նպատակները. «Նրա անգամները հանդիսավոր երգում են տվել հանուն մարդասիրության, արդարության և խաղաղության հասնել Հայաստանում տիրող գրություն մշտական բարելավման և քրիստոնյա բնակչության, նրա հավատի, կյանքի, պատվի և ունեցվածքի անվտանգության ապահովման»³⁷:

1892 թ. «Հայաստան» լրագրի հրատարակման դադարեցումից հետո «Անգլո-հայկական ասոցիացիան» մնում է առանց տպագիր օրգանի: Սակայն այն ունենալու անհրաժեշտության բերումով 1893 թ. հոկտեմբերին հիմնվում է «Անգլո-արմենիեն գազետան» (Անգլո-հայկական լրագիրը): Որպես այդ թերթի գլխավոր մրցակից հանդես էին գալիս «Արմենիա» հանդեսը և նրա խմբագիր Մ. Ջերազը: «Հայրենասիրաց ընկերությունը» և նրա նախագահ Կ. Հակոբյանը լիովին անցնում են «Անգլո-հայկական ասոցիացիայի» կողմը:

1894 թ. սկզբին Մերձավորարևելյան Հիմնահարցի և նրա նոր ճգնաժամի սրումը համընկնում են անգլիական արտաքին քաղաքականության ձգտմանը՝ հասնելու Օսմանյան կայսրության բաժանմանը: Այստեղ հիմնական դերը վերապահվում է «Անգլո-հայկական ասոցիացիային», որը լիբերալ կուսակցության ձեռքին հանդիսանում էր հասարակական կարծիքի նախապատրաստման միջոցներից մեկը:

1894 թ. սեպտեմբերին Լոնդոն է գալիս Հնչակ կուսակցության ղեկավար Ավետիս Նազարբեկյանը: Նա այստեղ է տեղափոխում կուսակցությունը՝ Կենտրոնը, խմբագրում կուսակցության բոլոր երեք տպագիր օրգանները, որի համար Լոնդոն է բերում նաև կուսակցության տպարանը:

Անգլիայի պրեմիեր մինիստր լորդ Սոլսբերին 1896 թ. աշնանը դիմում է կոնսերվատորների կուսակցությանը՝ երկրում հայկական ասոցիացիային աջակցելու կոչով, սակայն իրականում նա Թուրքիայում տեղի ունեցող բռնությունների դեմ հանդես գալու մոլի կողմնակիցը չէր: Անգլիայի հայ հայրենասերների որոշ մասը հասկանում էր, որ պրեմիեր մինիստրի նման հայտարարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հասարակայնության աչքում իր հեղինակությունը բարձրացնելու մի փորձ³⁸:

1897 թ. ապրիլին Արփ. Արփիարյանը, ի հակակշիռ «Հնչակ» թերթի, Լոնդոնում սկսում է հրատարակել վերակազմյալ Հնչակյանների նոր օրգան «Մարտ» լրագիրը, որն անհաշտ պայքար է մղում Ա. Նազարբեկյանի

37 M. G. S e t h. History of the Armenians in India. Calcutta, 1895, p. 42.

38 S. M. T e r G r e g o r. History of Armenia. London, p. 200.

և նրա կողմնակիցների դեմ: 1897 թ. սեպտեմբերին վերակազմյալ Հնչակյանները Արփ. Արփիարյանի գլխավորությամբ հաղթանակ են տոնում Ա. Նազարբեկյանի նկատմամբ և նրան հարկադրում թողնել Անգլիան:

1904 թ. Սասունի ապստամբությունը նորից իր վրա է բեռնում Եվրոպայի ուշադրությունը հայերի և Թուրքիայի մյուս քրիստոնյա ժողովուրդների դրություն նկատմամբ: Այդ շրջանում «Անդլո-Հայկական ասոցիացիան» դառնում է հայկական ազիտացիայի առաջատար ուժը ոչ միայն Անգլիայում, այլև Արևմտյան Եվրոպայում: Շուտով կաթողիկոս Սրբմյանը նոր դեսպանություն է ուղարկում Եվրոպա, որի մեջ մտնում էին Հովհ. Սարաչյանը և Ա. Այվազյանը: Պատվիրակության գլխավոր նպատակն էր հասնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործմանը: Կաթողիկոսը դիմել էր նաև Անգլիայի հայերին, այդ թվում Եպիսկոպոս Գ. Ութուղյանին պատվիրակությանը ակտիվորեն աջակցելու կոչով: Թեև պատվիրակությանն աջակցում են «Լոնդոնի հայկական միացյալ ասոցիացիան» և նրա ղեկավար Արամ Բաֆֆին, բայց Լոնդոնի և Մանչեստրի հայ համայնքները ակտիվորեն չեն մասնակցում երկրում հայկական ազիտացիայի ծավալմանը: Ասկայն միաժամանակ նրանք իրենց վրա են վերցնում պատվիրակության նյութական ապահովման գործը՝ նրա կարիքների վրա ծախսելով 300 ոսկե դրամ³⁹:

«Անգլո-Հայկական ասոցիացիան» 1904 թ. հունիսի 29-ին Լոնդոնում կազմակերպում է միջազգային կոնֆերանս նվիրված Արևելյան, մասնավորապես Հայկական հարցին: Ընդունվում է բանաձև, որը եվրոպական տերություններին կոչ էր անում գործադրելու ըստ հնարավոր միջոցները Արևմտյան Հայաստանում բարենորոգումների կենսագործման համար, շարունակելու Ֆրանսիայի, Իտալիայի և Անգլիայի պառլամենտներում այդ հարցի շուրջ սկսված քննարկումները⁴⁰:

1912 թ. հոկտեմբերին սկսված Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ հայ հայրենասերները ակտիվացնում են իրենց ջանքերը Եվրոպայի ուշադրությունը Հայկական հարցի վրա բեռնելու համար: Երբ հայտնի է դառնում, որ Բալկանյան հարցը քննարկվելու է Լոնդոնի կոնֆերանսում 1912 թ. դեկտեմբերին, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը նոյեմբերի 10-ին իջեցրած իր կոնդակով, Պոզոս Նուբար փաշայի գլխավորությամբ, ստեղծում է պատվիրակություն, որի մեջ մտնում են Արթին փաշան, Մ. Ջերադը, Եպիսկոպոս Գ. Ութուղյանը և Ա. Մոստիչյանը: Վերջին երկուսը ներկայացնում էին Անգլիայի հայերին:

1912 թ. տեղի է ունենում «Լոնդոնի հայկական միացյալ ասոցիացիայի» վերակազմավորում. այն դառնում է Լոնդոնի հայերի միակ հասարակական-քաղաքական և ազդային կազմակերպությունը: 1912 թ. «Միացյալ ասոցիացիայի» նախագահ է դառնում Գ. Մ. Գրեդորին՝ Հնդկաստանից ելած, բրիտանական զինված ուժերի պաշտոնաթող հայազգի փոխգնդապետը: «Միացյալ ասոցիացիայի» նոր ծրագիրը իր երկու հիմնական նպատակներից մեկը համարում էր «Հայաստանի վրա ազդող քաղաքական իրազարժույթունների ուղղությանը հետևելը և հնարավոր բոլոր խաղաղ

39 Մ ու Ն Ն Պ Ե պ ի ս կ ո պ ո ս. նշվ. աշխ., էջ 197:

40 «Հնչակ», 1904, № 6:

միջոցների օգտագործումը երկրի և ժողովրդի դրուժյան բարելավման համար»:

«Միացյալ ասոցիացիայի» հասարակական-քաղաքական գործունեությունը մեծ նշանակություն հաղորդելու համար կազմակերպվեց Անգլիական կամ այլ կերպ ասած՝ Անգլո-հայկական կոմիտե⁴¹: 1913 թ. Լոնդոնի հայ համայնքը խնդրանքով դիմում է Ա. Գ. Սայմոնդսին՝ հայերին քաղաքական աջակցություն ցույց տալու համար: Վերջինս հիմնում է «Հայաստանի բրիտանական կոմիտե», որի քարտուղարն է դառնում ինքը: Այդ կոմիտեն, որը գործում էր «Բալկանների բրիտանական կոմիտեին» զուգահեռ, իր մեջ ընդգրկել էր պառլամենտի անդամներ և բրիտանական քաղաքագետներ, որոնք աշխատում էին Հայկական հարցի լուծման ուղղությամբ: Կոմիտեի անդամների թվում էին պառլամենտի անդամներ Տ. Պ. Օ'Քոննորը և Ա. Բրայսը: «Լոնդոնի հայկական միացյալ ասոցիացիայի» անդամները գերազանցապես Մեծ Բրիտանիայի քաղաքացիներ էին, առաջին հերթին՝ Հնդկաստանից ելածները: Նման կազմի հետևանքով կազմակերպության քաղաքական կուրսը լիովին անգլամետ էր, թեպետև նրա անդամների մեջ բավական կարևոր դեր էր խաղում նաև «ռուսական թևը»:

Հայկական հարցի խնդրում նման հայացքներ էին տիրում առավելապես Մանչեստրի հայրենասերների մոտ, որտեղ առաջատար գործիչներ էին արքեպիսկոպոս Գ. Ութուղյանը և շեքսպիրագետ Գ. Ֆնտզլյանը: Հայկական հարցի խնդրում համատեղ գործունեություն անհրաժեշտությունից ելնելով՝ Անգլիայի հայ համայնքները հիմնում են «Անգլիայի հայկական քաղաքական կոմիտե» կազմված Լոնդոնի և Մանչեստրի բաժանմունքներից: Լոնդոնի բաժանմունքի նախագահն էր Գ. Մ. Գրեգորին, իսկ Մանչեստրինը՝ վերը արգեն նշված Գ. Ութուղյանն ու Գ. Ֆնտզլյանը:

Ընդառաջելով «Անգլիայի հայկական քաղաքական կոմիտեի» համատեղ ժողովի որոշմանը, Տ. Օ'Քոննորը կարգինալ Բուրնյեի միջոցով 1915 թ. օգոստոսին գիմում է Հռոմի պապի միջնորդությունը՝ Թուրքիայում հայերի հետագա կոտորածները կանխելու խնդրանքով: Ի պատասխան, կարգինալ Բուրնյեն 1915 թ. սեպտեմբերի 14-ին գրում է Օ'Քոննորին, թե «Զեր նամակն ստանալուն պես ես օգոստոսի 23-ին կապվեցի կարգինալի պետական քարտուղարի հետ... Ակնհայտորեն փաստերը Հռոմում քաջ հայտնի են և առաջ են բերել նորին Սրբույթյան մեծ կարեկցանքը»⁴²:

Անգլիայում տեղի է ունենում հայ հայրենասերների մերձեցումն այն ժողովուրդների ներկայացուցիչների հետ, որոնք պայքարում էին թուրքական արյունալի կարգի գեմ: 1918 թ. հունվարի 18-ին Լոնդոնում հայ և հույն համայնքների ներկայացուցիչների հանդիպման ժամանակ ստեղծվում է տեղի խառը կոմիտե, որը կազմված էր չորս ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուր համայնքից:

1918 թ. մայիսին լոնդոնահայ հայրենասերների ջանքերով, ինչպես Հաագայում և Ժնևում, Լոնդոնում ևս ստեղծվում է Հայկական տեղեկատ-

41 A. N a s s i a n. Britain and the Armenian Question, 1915–1923. London, 1984, p. 97.

42 "Ararat", 1915, September, N27, p. 95.

վուժյան բյուրո, որը գլխավորում է Արամ Բաֆֆին: Այս օրերին Մանչեստրում ստեղծվում է, այսպես կոչված, «Եռյակ միություն», որի մեջ մտնում են քաղաքի հայերը, ասորիները և հրեաները: 1919 թ. հունվարին Լոնդոնի հայ և հույն հայրենասերները հիմնում են «Հայ-հունական համագործակցության կոմիտե», որի նպատակն էր իրագրել «երկրի հասարակական կարծիքը այն դաժանությունների մասին, որոնք գործադրվել էին Փոքր Ասիայի և Հայաստանի հույն և հայ բնակչության նկատմամբ»⁴³:

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում բացված ինդագոլության կոնֆերանսին թույլ չեն տալիս մասնակցելու հայերի ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակություններին: Հարկ է նշել, որ Անգլիայի հայ հայրենասերները կանգնած էին Պողոս Նուբարի գլխավորած հայ ազգային պատվիրակության դիրքերում, որի անդամներից երեքը անգլիահայ համայնքի ներկայացուցիչներ էին: 1919 թ. հունվարի 25-ին Մանչեստրի և Լոնդոնի հայ համայնքները Գ. Ֆնտոլյանին ընտրում են պատվիրակ Փարիզում կայանալիք Հայկական ազգային համագումարին մասնակցելու համար⁴⁴:

«Միացյալ ասոցիացիան» ոչ պակաս չափով շահագրգռված էր նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակության հաջողություններով, որ գլխավորում էր Ա. Ահարոնյանը: 1919 թ. նոյեմբերի 21-ին «Միացյալ ասոցիացիան» Լոնդոնում կազմակերպում է ընդունելություն ի պատիվ Ա. Ահարոնյանի, իսկ նոյեմբերի 29-ին այն ողջունում է արդեն Պողոս Նուբարին:

* * *

Տեսանք, որ հայ մամուլի պատմությունը Անգլիայում սկիզբ էր առել Մանչեստրում հայկական գաղութի հիմնադրումից ի վեր: 1862 թ. հայերի խնդրանքով Փարիզից Մանչեստր է գալիս հայագետ Կարապետ Շահնազարյանը, որը դառնում է նրանց հոգևոր հովիվը, միաժամանակ նախաձեռնում տեղում հայերեն լրագրի հրատարակումը: 1863 թ. հուլիսի 30-ին Կ. Շահնազարյանի սեփական տպարանում սկսում է լույս տեսնել «Երկրագունդ» երկչաքսթյա լրագիրը: Այդ գործին նյութապես օժանդակում են համայնքի հարուստ առևտրականները: Պարբերականը լուսաբանում էր քաղաքական, գրական, կրթական և առևտրական թեմաներ, ուներ բավական լայն տարածում Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Ալեքսանդրիայի, Բատավիայի և Լոնդոնի հայերի շրջանում: Մանչեստրի հայոց այդ առաջին տպագիր օրգանն ուներ բավական հետաքրքիր բովանդակություն և, իր նպատակի համաձայն, հոդվածներ էր զետեղում գիտություն, առևտրի, պատմության ու դրականության հարցերի վերաբերյալ: Նրա էջերում համառպալքար էր մղվում հայոց ազգային նկարագրի պահպանման համար: 1863–1864 թթ. լույս է տեսնում լրագրի 30 համար, որից հետո այն դադարում է հրատարակվել: 1866 թ. Կ. Շահնազարյանի մահից հետո նրա կողմնակիցները տպարանը տեղափոխում են Կ. Պոլիս, որտեղ սկսում են հրա-

43 Նույն տեղում, հ. V, № 63, հունվար-փետրվար, 1919, էջ 6:

44 Նույն տեղում, հ. VI, № 66, 1919, էջ 406:

տարակել «Երկրադունդ» հանդեսը: Մական լրագրի հրատարակման դադարումից հետո էլ Մանչեստրի հայերը շարունակում են իրենց հրապարակախոսական գործունեությունը հանդես գալով «Արարատում» և «Մշակում», տեղեկություններ հաղորդելով նաև իրենց դադուկի վերաբերյալ: Թղթակցային նկատելի ակտիվություն են հանդես բերում Անգլիայի հայերը հատկապես 1877 թ. հետո, երբ հայ հասարակայնության ուշադրությունը բևեռվում է Բեռլինի կոնգրեսի նախապատրաստմանը, նրա աշխատանքին և Մ. Խրիմյանի գլխավորած ազգային պատգամավորության գործունեությունը: Թիֆլիսի «Մշակում» դրեթե ամեն օր տպագրվում էին հաղորդագրություններ Լոնդոնից և Մանչեստրից, որոնց օգնությամբ նրա ընթերցողները իմանում էին ազգային պատվիրակության և տեղի հայրենասերների յուրաքանչյուր քայլի մասին:

XIX դ. 80-ական թվականների վերջին – 90-ականների սկզբին, հայ ազգային-ազատագրական շարժման աշխուժացման պայմաններում, Փարիզից Լոնդոն են դալիս Հովհ. Պրուսալյանը և Մ. Սվազլյանը: 1888 թ. նոյեմբերին նրանք հիմնադրում են «Հայաստան» երկչաբայթյա պարբերականը, որը «Հայոց հայրենասիրաց ընկերության» օրգանն էր: Նրա քաղաքական գիրեկտորն էր Հովհ. Պրուսալյանը (ժան Պրուսալի), խմբագրությունը քարտուղարը՝ Ա. Մելքոնյանը (Ջեյմս Մալքոլմ), իսկ խմբագիր՝ Մ. Սվազլյանը (Մ. Սվազլի): Լրագիրը 1888 թ. լույս էր տեսնում 1000 օրինակ տպաքանակով և իր հիմնական խնդիրն էր համարում քաղաքական-հայրենասիրական հարցերի լուսաբանումը: Նրա էջերում տեղ էին գտնում նաև հայ ժողովրդի պատմության, Լոնդոնի հայ համայնքի ազգային կյանքի հարցերը: Թերթի միացյալ 3-րդ և 4-րդ համարները արգելվեցին Թուրքիայում:

Ինչպես ասվեց, 1889 թ. Լոնդոն տեղափոխվելուց հետո Մ. Չերազը ձեռնամուխ է լինում հայկական քաղաքական և գրական նոր հանգեսի հրատարակմանը: Նոյեմբերի 15-ին այստեղ սկսում է լույս տեսնել «Լ. Արմենիա» հանդեսը՝ Ֆրանսերեն լեզվով, իսկ նրա համարների մի մասն էլ անգլերեն: Արդեն նոյեմբերի 21-ին «Մշակը», անգրագառնալով այդ հանգեսին, գրում էր, թե լրագիրն ունի քաղաքական և գրական բովանդակություն, և նրա նպատակն է եվրոպային ծանոթացնել Հայաստանի, հայոց պատմության, կրոնի, լեզվի, գրականության և արհեստների հետ⁴⁵: 1889–1891 թթ. հանգեսը լույս է տեսնում ամիսը երկու անգամ, իսկ 1892 թվականից մեկ անգամ: Մ. Չերազը գրում է, թե պարբերականի նպատակն է «բոլոր ուժերով օգնել և աջակցել հայագիտական հետազոտություններին եվրոպայում, լուսավորյալ աշխարհի ուշադրությունը հրավիրել մեր հայրենակիցների հետազոտությունների վրա և, պատկերավոր ասած, բացահայտել Արարատի ժողովրդի անցյալն ու ներկան»⁴⁶:

Մ. Չերազը նպատակադրվել էր Լոնդոնում անդլերեն թարգմանություններ հրատարակել հայ դրականության գանձերը, որին նվիրել էր հանդեսից մի մեծ հատված: Նա անդլերեն և ֆրանսերեն լեզուներով հետազոտություններ էր հրապարակում հայ նշանավոր բանաստեղծների մասին,

45 «Մշակ», Թիֆլիս, 1889, № 133:

46 "Armenia", London, 1894, N72, p. 1.

ընթացորդներին ներկայացնում հայկական տարեգրությունները, թարգմանում էր հայ գրականության արժեքավոր էջերը, պարզաբանում հայերի դերը՝ որպես Արևելքում արևմտյան քաղաքակրթության դրոշակակիրները⁴⁷:

Թղթակցային մշտական կապ էր պահպանվում մի կողմից Անգլիայի հայ համայնքների, մյուս կողմից հայկական և բրիտանական մամուլի միջև: Անգլիական մամուլի աչքի ընկնող օրգաններում («Ֆայնենշլ ստանդարտ», «Թայմս» և այլն) հոդվածներով հանգես էին գալիս Մ. Սվազլյանը, Ա. Մելքոնյանը, Կ. Հակոբյանը: Հրապարակախոսական լայն գործունեություն է ծավալում Մ. Սվազլյանը: Բրիտանական հասարակայնության առաջ նրա կարգացած բազմաթիվ դասախոսությունները և զեկուցումները տեղ գտան նաև գասախոսությունների ժողովածուներում: 1890 թ. Անգլիայում լույս է ընծայվում 1889 թ. ընթացքում կարգացված ճառերի ժողովածու՝ «Մտորումներ ազգային կյանքի մասին» վերտառությամբ: Այնտեղ զետեղված առաջին ճառերից մեկը Մ. Սվազլյանի զեկուցումն էր՝ «Հայաստանը, հայերը և Հայկական հարցը» վերնագրի տակ⁴⁸:

1891 թ. ապրիլից «Հայաստան» լրագիրը սկսում է լույս տեսնել ամիսը մեկ և վերածվում է ամսագրի: 1891 թ. ապրիլ-մայիսի միացյալ համարից սկսած «Հայաստանը» դառնում է «Անգլո-հայկական ասոցիացիայի» պաշտոնական օրգանը: Ստեղծվեց նաև հայերից և անգլիացիներից կազմված վերահսկող ենթակոմիտե, որը նրա տնօրենն Մ. Սվազլյանի հետ միասին պետք է որոշեր պարբերականի քաղաքական կուրսը: Այդ ժամանակ Անգլիայից հեռանում է Հովհ. Պրուսալյանը, որից հետո ամսագրի գործերը հաջող չեն ընթանում: Այսպես, «Հայաստանի» 1892 թ. առաջին համարը լույս տեսավ միայն ապրիլին, որից հետո նրա հրատարակությունը գաղարեց:

1894 թ. սեպտեմբերին Ա. Նազարբեկյանի հետ միասին Լոնդոն է տեղափոխվում Հնչակյան կուսակցության տպարանը: Այդ թվականի սեպտեմբերից այստեղ շարունակվում է կուսակցության երեք օրգանների հրատարակությունը՝ «Հնչակ» երկչարաթյա լրագրի, դիտական սոցիալիզմի մեկնարանմանը նվիրված «Գաղափար» հանդեսի և քաղաքական-երգիծական «Ապտակ» հանդեսի տպագրությունը: «Գաղափարը» խմբագրում էին Ավետիս և Մարո Նազարբեկյանները: «Ապտակը» ակտիվորեն մասնակցում էր Անգլիայի հայոց կյանքին, քննադատում էր Մանչեստրի հայերին, որոնք նյութապես չէին աջակցում Մ. Չերազի «Արմենիա» հանդեսի տպագրությանը: 1895 թ. «Ապտակը» տպագրվում էր նկարագարով. հանդեսի համար նկարում էր լոնդոնահայ նկարիչ Չ. Կորմիկը: Ըստ էության, դա հայ իրականության մեջ քաղաքական երգիծանքի առաջին փորձն էր⁴⁹:

1896 թ. վերակազմյալ Հնչակյանները, Արփ. Արփիարյանի գլխավորությամբ, Լոնդոնում սկսում են նույն «Հնչակ» անունով հրատարակել ի-

47 Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Մինաս Չերազ, էջ 268-269:

48 «Հայաստան», 1890, № 5, 6:

49 «Ապտակ», Լոնդոն, 1895, № 2, էջ 4:

րենց կուսակցական օրգանը, սակայն 1897 թ. կուսակցության օրգանն է դառնում «Մարտ» լրագիրը, որը լույս էր տեսնում ամիսը մեկ անգամ և նվիրված էր կուսակցության գործունեության և հայ ազգային-ազատագրական շարժման խնդիրներին:

Ինչպես նշվեց, 1898 թ. հունվարին Լևոն Բաշայանը Լոնդոնում սկսում է հրատարակել ազգային, գրական և քաղաքական «Նոր կյանք» երկշաբաթյա հանդեսը, որի ծրագրում ասված էր, թե հանդեսը աշխատելու է աջակցել հայ ժողովրդի քաղաքական դաստիարակությանը, հետազոտելու է ժամանակակից հայ կյանքը իր ողջ բազմաձևության մեջ⁵⁰: «Նոր կյանքի» հետ սերտորեն համագործակցում էին Վահրամ և Մարի Սվազլյանները, Կ. Բասմաջյանը, Ա. Օհանյանը, Երվանդ Օտյանը և ուրիշներ:

1898 թ. սեպտեմբերին Ս. Պարթևյանի խմբագրությամբ Մանչեստրում լույս է տեսնում ազգային-գրական ամենամսյա «Վաղվան ձայն» հանդեսը: Սակայն ճ-րդ համարից հետո հանդեսը դադարում է լույս տեսնել, և «Նոր կյանքը» Անգլիայում մնում է միակ հայ պարբերականը, որի մակարդակը 1899 թ. նոյեմբերին Երվանդ Օտյանի Լոնդոն գալով և նրա աշխատակցության շնորհիվ ավելի է բարձրանում:

1900 թ. ապրիլին Մանչեստրի հոգևոր հովիվ Թորոս Իսահակյանը (Թեոդոր Իսակ կամ Թորոս Զուղայեցի) սկսում է կրոնական և աստվածաբանական «Եկեղեցի Հայաստանյայց» ամենամսյա հանդեսի հրատարակությունը: 11-րդ համարից, որը լույս տեսավ 1901 թ., հանդեսը փոխում է իր անունը և սկսում է կոչվել «Հայ եկեղեցի»: Սակայն 1902 թ. Թ. Իսահակյանը Մանչեստրի հայ համայնքում ծագած վեճերի պատճառով հեռանում է Անգլիայից, և նրա հանդեսը դադարում է լույս տեսնել:

1902 թ. Հնչակյան կուսակցության հրավերով Փարիզից կրկին Լոնդոն է դալիս Ս. Պարթևյանը՝ «Վաղվան ձայնի» նախկին խմբագիրը, բայց չնայած նրա ջանքերին, 1902 թ. «Նոր կյանքը» դադարում է հրատարակվել:

1902 թ. Կ. Թումայանը, նախկին «Հայկական տուն» որբանոց-դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները Լոնդոնում հիմնադրում են «Պատանի» ամենամսյա հանդեսը, որը լուսաբանում էր պատանեկության, բարոյականության և լուսավորության հարցերը: 1904 թ. Կ. Թումայանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել նաև նոր պարբերական ամենամսյա անգլիալեզու «Արմինիեն նյուս» («Հայկական նորություններ») լրագիրը, որն իր նպատակն էր համարում Հայաստանի շահերին աջակցելը: Բայց նույն թվականին էլ լրագրի հրատարակությունը դադարում է:

1905 թ. ուսու-ճապոնական պատերազմի ժամանակ հրապարակախոսական գործունեությամբ է զբաղվում Արամ Բաֆֆին՝ դառնալով Լոնդոնի ուսական տեղեկատվության բյուրոյի քարտուղարը: 1907 թ. Լոնդոնում հիմնադրվում է հայկական նոր պարբերական «Փարոս» լրագիրը, որը հենց նույն տարում փակվում է, 1907 թ. դեկտեմբերին դադարում է նաև «Պատանու» հրատարակությունը: 1907–1908 թթ. Բրայտոնում լույս է տեսնում Հնչակյանների «Ձայն» շաբաթաթերթը:

⁵⁰ «Նոր կյանք», 1898, №1:

1913 թ. հուլիսին «Լոնդոնի Հայկական միացյալ ասոցիացիայի» վերակազմավորումից հետո Արամ Բաֆֆին, որը մտնում էր ղեկավար կազմի մեջ, հիմնադրում է անգլիայեզու «Արարատ» հանդեսը: Հանդեսը նշված ասոցիացիայի օրգանն էր և իր նպատակին համապատասխան կոչվում էր «Լուսարձակ Հայաստանի վրա»: «Արարատի» խմբագրական հոդվածում ասված էր, որ «հրատարակության նպատակն է այս երկրի հասարակական կարծիքին ներկայացնել այնպիսի փաստեր, որոնք հաղորդվում են թուրքահայաստանի իշխանությունների կողմից, որոնք տվյալ պահին պատասխանատվություն են կրում, ինչպես նաև ընթացիկ ամբողջ ինֆորմացիան այն թեմաներով, որոնք ազգային հետաքրքրություն են ներկայացնում»⁵¹: Այդ խնդրից ելնելով, լայնորեն լուսաբանվում էին բոլոր կարևոր քաղաքական իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում Անգլիայում Հայկական հարցի աղբյուրով: Հանդեսն ուներ մշտական ենթագծեր, որտեղ լուսարանվում էին Անգլիայի Հայ համայնքների ազգային կյանքը, նրանց մշակութային միջոցառումները: 1914 թ. հունվարին Ա. Բաֆֆին թողնում է «Արարատի» խմբագրի պաշտոնը, այն ստանձնում է Գ. Մ. Գրեդորին «Միացյալ ասոցիացիայի» նախագահը, որը հանդեսը խմբագրում է մինչև 1918 թ.: Հանդեսի բաժանորդագիրների թվի ավելացմանը նպաստում էր այն հանգամանքը, որ Հարավարևելյան և Հարավային Ասիայի, այդ թվում Հնդկաստանի Հայկական շատ համայնքներ չունեին իրենց սպազիթ օրգանը⁵² և շահադրգուլված էին «Արարատի» հրատարակության շարունակմամբ: 1915 թ. հանդեսը բաժանորդագիրներ ուներ Կալկաթայում, Ռանդոլֆում, Սինդապուրում, Իոկահամայում, Բիրմայում և Հարավարևելյան Ասիայի այլ շրջաններում: 1919 թ. հանդեսի բաժանորդագիրների թիվը հասնում է 650 մարդու⁵³: 1920 թ. փարնանը պարբերականի հրատարակումը դադարում է:

1918 թ. մայիսին Լոնդոնում Արամ Բաֆֆին բացում է «Հայկական ինֆորմացիոն բյուրո», որի նպատակն էր «հավաստի նորությունների մատակարարումը և Հայաստանին վերաբերող բոլոր հարցերի գծով հարցումներին պատասխան տալը»⁵⁴: 1918 թ. վերջերին բյուրոն արդեն լույս էր ընծայել Հայաստանի մասին վեց գրքույկ, որոնցում գետեղված էին բրիտանացի հայասերների հոդվածներն ու դասախոսությունները: Արամ Բաֆֆու հիվանդության պատճառով ընդհուպ մինչև նրա մահը (12 նոյեմբերի, 1919 թ.) բյուրոն գլխավորում էր Արշակ Բաֆֆին:

* * *

Անգլիայում համեմատաբար մեծ չէր գիտությունը գրադավող Հայերի թիվը: Այդ ասպարեզում առաջինը հանդես են գալիս հնդկահայերը, որոնք Անգլիա են դալիս կրթություն ստանալու նպատակով հիմնականում մասնագիտանալով բժշկագիտության և իրավագիտության բնագավառներում:

51 "Ararat", London, vol. I, N1, July, 1913, p. 1.

52 M. G. Seth. Armenians in India. Calcutta, p. 603.

53 "Ararat", London, vol VI, N63, 1919, p. 307.

54 Նույն տեղում, հ. V, № 58, 1918, էջ 416:

Անգլիայում է սովորել և աշխատել մադրասաբնակ Ջ. Մ. Ջոզեֆը: 1852 թ. Լոնդոնի վիրաբույժների թագավորական քոլեջն ավարտելուց մի քանի տարի հետո նա ստանում է Գլազգոյի համալսարանի բժշկագիտության դոկտորի աստիճան և վիրաբույժության մագիստրոսի կոչում: 1858 թ. նա ընտրվում է էդինբուրգի բժիշկների թագավորական քոլեջի խորհրդի, իսկ 1860 թ.՝ Լոնդոնի բժիշկների թագավորական քոլեջի անդամ⁵⁵:

1870-ական թվականների սկիզբներին Անգլիայում բնակություն է հաստատում ագուլիսցի Հովհաննես Քալանթարյանցը (Ջ. Ա. Քալանթարը), որը հետագայում դառնում է վիրաբույժ: Նա հայտնի է իր բազմաթիվ գյուտարարություններով: Տակավին 1870 թ., դեռևս Լոնդոնի Յունիվերսիտի քոլեջի ուսանող, Քալանթարը ստեղծում է դյուրակիր ջերմաչափ, որն արժանանում է գիտական շրջանակների բարձր գնահատականին: Այդ մասին հատուկ հոդված է տպագրում Լոնդոնի «Ֆիլոսոֆիկալ մեդեզին» հանդեսը՝ իր 1870 թ. մայիսյան համարում:

1870-ական թվականների կեսերից Անգլիան դառնում է այն կենտրոններից մեկը, ուր դալիս էին հայերը՝ կրթություն ստանալու և դիտլիսյամբ պարապելու համար: Մեծ մասամբ նրանք Պարսկաստանից, Հնդկաստանից և Թուրքիայից եկած հայեր էին, որոնք մասնագիտություն էին ստանում հոգադործության, բժշկության և իրավագիտության գծով:

1890 թ. Լոնդոնի համալսարանի Քինգս քոլեջի պրոֆեսորի կոչում է ստանում Մինաս Չերազը: Անգլիայում հայերից առաջինը նա է արժանանում այդ կոչմանը և զբաղեցնում պրոֆեսորի պաշտոն՝ դառնալով հայոց լեզվի ամբիոնի վարիչ: XIX դ. 90-ական թվականներին Դյուրհեմի համալսարանում աստվածաբանություն էր զբաղվում լեզվաբան Սուքիաս Պարոնյանը, որին 1896 թ. տրվում է աստվածաբանության գոկտորի գիտական աստիճան⁵⁶: 1893 թ. վիրաբույժների և բժիշկների թագավորական քոլեջում վիրաբույժության դոկտորի գիտական աստիճան է տրվում Ա. Դ. Ստեփանյանին:

Առաջին հայկական դպրոցը Անգլիայում բացվում է Լոնդոնում 1897 թ.: Դա, ինչպես նշվեց, «Հայկական տուն» դպրոց-որբանոցն էր, որը հիմնադրել էր Կարապետ Թումայանը: Դպրոցն ուներ երկու ուսուցիչ և 20 աշակերտ: Այն միաժամանակ ուսումնարան էր, որտեղ սաներին սովորեցնում էին տարբեր արհեստներ, մասնավորապես նաև մեքենաշինություն, երկրագործություն և գործնական երկրաչափության հիմունքներ:

Մանչեստրի հայկական դպրոցում 1903 թ. նոր փորձ է ձեռնարկվում հայ պատանիներին առևտրական կրթություն տալու ուղղությամբ: Գ. Ֆնտդլյանի նախաձեռնությամբ Մանչեստրի հայերի մեջ սկսվում է ամենամյա նվիրատվությունների հանգանակում՝ քաղաքի համալսարանում առևտրական ֆակուլտետ հիմնադրելու նպատակով⁵⁷: Այս տարիներին Անգլիայի ուսումնական հաստատություններում աշխատում էին մի շարք հայեր, որոնք զբաղվում էին լեզվաբանությամբ, արևելյան և սլավոնական լեզուների դասավանդմամբ: Դրանցից էր Արմեն Արդոնցը, որը Մեյդ-

55 M. G. S e t h. History..., p. 169.

56 «Մշակ», 1896, № 40:

57 "Armenie", N179, 1903, p. 4.

սոնի տեղական դպրոցում 1905 թ. դասավանդում էր ֆրանսերեն լեզու: Մատենագիտության և Հայկական ձեռագրերի ուսումնասիրման ուղղությամբ գիտական զգալի աշխատանք էր կատարում Ս. Պարոնյանը: Նա կազմում է Բրիտանական թանգարանում և Բոդլիանյան գրադարանում պահվող հայերեն ձեռագրերի մի շարք կատալոգներ⁵⁸: Սակայն Ս. Պարոնյանի մահվանից հետո նրա աշխատանքը մնում է անավարտ և չի հրատարակվում:

Անգլիայում մանկավարժական աշխատանք էին կատարում Բաֆֆի եղբայրները: Արամը Ասիայի և Աֆրիկայի երկրների ուսումնասիրման գպրոցում գասավանդում էր արաբերեն, պարսկերեն և այլ լեզուներ, իսկ Արշակը՝ ռուսաց լեզու: Լոնդոնի Համալսարանի Քինգս քոլեջում: Արշակը աշխատանքի էր հրավիրվել նաև Օքսֆորդի և Քեմբրիջի Համալսարաններում⁵⁹: Արվեստների մագիստրոսի և բժշկության դոկտորի աստիճան էր ստացել Գ. Դուրյանը՝ Քեմբրիջի Համալսարանում: 1910 թ. հետո լոնդոնահայ պատմաբան Գ. Մ. Գոեգորին հեղինակում է մի շարք գործեր Հայաստանի պատմության վերաբերյալ: Բազմաթիվ հոգվածներ է նա տպագրում Լոնդոնի «Արարատ» հանդեսում: Մի որոշ ժամանակ Լոնդոնում ապրեց և ստեղծագործեց Նիկողայոս Ադոնցը, որ դեռևս 1902 թ. այստեղ ուսումնասիրում էր Բրիտանական թանգարանում պահվող աշխատանքները⁶⁰: 1918 թ. հետո, երբ Լոնդոնի արևելյան լեզուների գպրոցում մտցվեց նաև Հայոց լեզվի դասավանդում, դրա պատվավոր ուսուցիչ դարձավ գիտությունների դոկտոր Պ. Տոնապետյանը:

Անգլիայում որոշ հայեր ի սկզբանե հանգես են բերում ստեղծագործական հակումներ: Նրանցից էր, օրինակ, Հովհ. Հովակիմյանը, որն անգլերեն գրում է «Նախասկզբնական առևտրի պատմություն» աշխատությունը: Նրա որդի Գ. Հովակիմյանը 1860 թ. այդ աշխատությունը թարգմանում է աշխարհաբար և հրատարակում Փարիզում:

1885 թ. սկսած՝ Անգլիայում հրատարակախոսական և գրական գործունեություն է ունենում Մինաս Չերազը: Անգլիայի գիտական և գրական ընկերություններում նա բազմիցս դասախոսություններ է կարգում Հայ գրականության և ժողովրդական բանահյուսության վերաբերյալ: Նա ծրագրել էր Հայ դասականների դործերը թարգմանել և հրատարակել անգլերեն լեզվով: 1893 թ. ապրիլի 11-ին Մ. Չերազը Թագավորական ասիական ընկերությունում դասախոսություն է կարդում Սայաթ-Նովայի մասին՝ «Սայաթ-Նովա (Կովկասի ժողովրդական երգիչը), նրա կյանքն ու երգերը» վերնագրով, իսկ հունիսի 21-ին՝ Հայ ժողովրդական հեքիաթների մասին:

Լոնդոնի Հայ Համայնքի գրական կյանքի կարևոր երևույթներից էր 1894 թ. քաղաքում Հայկական ընթերցարանի բացումը: 1896–1897 թթ. Մանչեստրում կրկին բացվում է ընթերցասրահ, որտեղ դասախոսություններով հանդես են գալիս Մ. Չերազը և Արամ Բաֆֆին: 1897–1901 թթ. Լոնդոնում էր ապրում Լևոն Բաշալյանը, որը մտադրվել էր Շեքսպիրի

58 «Արարատ», 1914, փետրվար, էջ 167–170:

59 «Փարուն», Երևան, 1970, №5, էջ 82:

60 Յ. Ա. Ա. К о п я н. Арменоведение в России. Ереван, 1988, с. 231 – 232.

ստեղծագործությունները թարգմանել հայերեն: Նրա հետ սերտ հարաբերություններ էին սլահպանում Արփ. Արփիարյանը, Երվանդ Օտյանը և Գ. Ֆնտզյանը: Այգ նույն տարիներին Լոնդոնում ապրող Մ. Սվազյանը հայ գրականությունից առանձին գործեր թարգմանում է հունարեն, մասնավորապես Մարի Սվազյանի «Աըյուն» և Ս. Պարթևյանի «Մի կաթիլ ջուր» գործերը, որոնք տպագրվում են Լոնդոնի հունական հրատարակություններում⁶¹:

Լոնդոնում է սկսում իր գրական քայլերը արձակագիր-բանաստեղծուհի և նկարչուհի, բազմատաղանդ Ջաբել Բոյաջյանը: 1901 թ. Լոնդոնում անդլերեն լեզվով լույս է տեսնում նրա «Էստեր» վեպը, որտեղ նկարագրվում էր հայ կնոջ դառը ճակատագիրը Արևմտյան Հայաստանում: Վեպը լույս է տեսնում Վարդենի կեղծանվան տակ. հետագայում այդ անվան տակ էին տպագրվում անվանի գրողի գրական երկերն ու հոդվածները⁶²:

1902 թ. Պ. Տոնապետյանը Լոնդոնում հրատարակում է Հայաստանի մասին Լինչի մոնումենտալ աշխատության համառոտված հայերեն թարգմանությունը: Նա հայերեն է թարգմանում նաև «Հովսեփի էմինի կյանքն ու արկածները, 1726–1809» գիրքը: Այգ նույն թվականներին հրատարակական լայն գործունեություն էր ծավալել Կ. Թումայանը: 1905 թ. Ֆրանսերեն լեզվով լույս է տեսնում նրա «Արևելյան հարցի պատմություն և Հայկական հարցի ուղեցույց» գիրքը: 1906 թ. Կ. Թումայանը հրատարակում է երգարան, որտեղ ընդգրկված էին հարյուր լավագույն հայկական երգեր: Նույն թվականին նա լույս է բնծայում «Հայաստանի այբում» գիրքը, որտեղ զետեղված 75 լուսանկարները պատկերում էին հայերի վերջին ջարդերը Թուրքիայում:

1911 թ. Բոստոնում լույս է տեսնում Մուշեղ եպիսկոպոսի «Մանչեստրի հայ գաղութը» գիրքը: Առ այսօր այն միակ աշխատությունն է Մանչեստրի հայերի մասին: Գիրքը շաղաղելու համար հեղինակին նյութեր էին տրամադրել Գ. Ֆնտզյանը և Պ. Տոնապետյանը:

Լոնդոնում թարգմանչական և հրատարակչական լայն գործունեություն է ծավալում Գ. Մ. Գրեգորին: 1912 թ. նրա թարգմանություններն լույս է տեսնում «Հայ եկեղեցին» գիրքը, որը Ֆրանսերեն լեզվով հրատարակել էր Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք Մ. Օրմանյանը:

1915 թ. Լոնդոնում տեղի է ունենում քաղաքի հայ համայնքի հանդիպումը գրող և ազգային-հասարակական գործիչ Ա. Չոպանյանի հետ: Դեռևս դրանից մեկ տարի առաջ այստեղ Գ. Մ. Գրեգորիի անդլերեն թարգմանությունները տպագրվել էր Ա. Չոպանյանի «Հայաստանի ժողովուրդը» գիրքը: 1915 թ. Պ. Տոնապետյանը Լոնդոնում առաջին անգամ հրատարակում է Մ. Խրիմյանի «Արքաների հանդիպումը» պատմավեպը: Այն լույս է տեսնում առանձին գրքույկով, որտեղ զետեղված էին պամֆլետի հայերեն բնագիրը և ոտանավորի վերածված նրա անդլերեն թարգմանությունը: Տեքստի անդլերեն տարբերակը պատրաստել էր Լ. Բինյոնը:

Շեքսպիրի երկերի թարգմանություններ էին կատարում Գ. Փափազյանը և Գ. Ֆնտզյանը: Գ. Փափազյանը թարգմանում է և հրատարակում

61 «Նոր կյանք», 1900, № 3, էջ 7:

62 «Հայրենիքի ձայն», Երևան, 1972, № 47, էջ 7:

«Համլետը» (1902 թ.) և «Օթելլոն» (1904 թ.), իսկ Գ. Ֆնտգլյանը՝ «Անտոնիոս և Կլեոպատրա»-ն (1907 թ.): 1916 թ. Անգլիայում, Շեքսպիրի մահվան 300 ամյակին նվիրված համազգային միջոցառումների ժամանակ, «Շեքսպիրի մեծարանքը» գրքում տեղ գտան նաև Գ. Ֆնտգլյանի և Զ. Բոյաջյանի մեծ դրամատուրգին և բանաստեղծին նվիրված աշխատանքները: Զ. Բոյաջյանին պատիվ վիճակվեց Լոնդոնում համազգային հանդիսավոր ժողովում կարդալու իր պոեմը՝ «Հայաստանի սերը Շեքսպիրի հանդեպ» վերնագրով:

1916 թ. ամռանը Մեյդստոնում լույս է տեսնում Ա. Արզոնցի անդլերեն բանաստեղծությունների և արձակ գործերի ժողովածուն՝ «Երազներ ալեկոծված ծովի մոտ» վերնագրով: Նույն թվականի աշնանը Զ. Բոյաջյանը հրատարակում է «Հայկական լեզենդներ և պոեմներ» անգլերեն լեզվով իր գիրքը: Այստեղ ղետեղված էին հատվածներ հայկական լեզենդներից, բալլադներ և էպիգրամներ, ինչպես նաև Գողթնի երգեր: Գրքում տեղ էր գտել նաև Արամ Բաֆֆու էսսեն՝ «Հայաստան. նրա էպիկական պոեմները, ժողովրդական երգերը և միջնադարյան պոեզիան» վերնագրով: Արամ Բաֆֆին դրական նկատելի գործունեություն էր ծավալել, գրել էր մի շարք կոմեդիաներ. անավարտ էր մնացել պատմական մի դրամա⁶³:

1920 թ. գարնանը Լոնդոնում լույս են տեսնում Մայքլ Արլենի (Տ. Կուլումջյանի) «Լոնդոնի համարձակ նախաձեռնությունը» և պատմաբան Գ. Մ. Գրեգորիի «Արարատի երկիրը» աշխատանքները (երկուսն էլ՝ անգլերեն):

XX դ. սկզբին Անգլիայում էր ստեղծագործում հայ ականավոր նկարիչ և քանդակագործ Էդգար Շահինը: Արվեստներին հովանավորող Թագավորական ընկերության ցուցահանդեսում ներկայացված էին նրա փորագիր աշխատանքները, որոնք նշվեցին իրենց կատարման բարձր վարպետության համար⁶⁴: 1903–1904 թթ. հայ ժողովրդական երաժշտության բնագավառում հետազոտություններ էր կատարում Կ. Կալֆայանը՝ Մանչեստրից: Նա 1904 թ. գեկտեմբերին Փարիզում նախաձեռնում է հայ-ֆրանսիական արվեստաբանական հանդեսի հրատարակությունը՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով: 1906 թ. հունվարի 20-ին Լոնդոնում, Բեյսուոտերի «Վիկտորիա հոլլ» դահլիճում տրվում է առաջին հայկական թատերական ներկայացումը: Զ. Բոյաջյանը ներկայացրել է «Հայաստանի վերածնունդը» պիեսը, որը ստեղծվել էր Բաֆֆու «Սալբի» վեպի դրուխներից մեկի հիման վրա: Պիեսը արժանանում է անգլիացի թատերասերների բարձր գնահատականին: 1907 թ. հունվարին Լոնդոնի «Բիրթոն» թատրոնում կրկին տեղի է ունենում «Հայաստանի վերածնունդը» պիեսի բեմադրությունը: Նույն թատերասրահում բեմադրվում է Արամ Բաֆֆու «Վարդանի երազը» պիեսը, որը նվիրված էր XIX դ. 90-ական թվականների հայկական կոտորածներին⁶⁵:

1914 թ. հայկական դերասանական խումբը «Սմոլ Քինգզ հոլլում» բեմադրում է «Խոջա Նասրեդին» կոմեդիան, որտեղ Նասրեդինի դերը կատա-

63 "Ararat", London, vol. VI, N68, 1919, p. 539.

64 «Նոր կյանք», 1900, № 7, էջ 107:

65 "Armenia"; Boston, vol. III, N4, 1907, p. 35.

րում է Սմբատ Քեսեղյանը: 1915 թ. սկզբին լոնդոնահայերի երաժշտական և թատերական կյանքը նոր աշխուժություն է ապրում, որին մի զգալի չափով նպաստում է Ս. Քեսեղյանի գլխավորությամբ «Հայկական թատերական նոր խմբի» ստեղծումը: Վերջինս նախապատրաստում և 1915 թ. մարտի 6-ին «Քինգզ Հայտ Հոլլ» դահլիճում բեմադրում է Նարցիս Գյուլեսերյանի «Բունկում» պիեսը, որը պատմում է Բիթլիսում հայերի դեմ քրդերի ունեցած ելույթի մասին: Պիեսում Սարգիս աղայի դերը կատարում էր Ս. Քեսեղյանը. իսկ պիեսի հեղինակ Ն. Գյուլեսերյանը ստանձնել էր Ջարեի դերը⁶⁶:

Լոնդոնում հաջող ելույթներ է ունենում հայտնի պարուհի Արմինե Տեր-Օհանյանը, իսկ հայ երգչուհի Մաննա Կարինյան Ջ. դը Մարիեի, Գ. Կուպերի և այլոց հետ Լոնդոնում մասնակցում է «Դիվանագիտություն» պիեսի բեմադրությունը⁶⁷:

Անգլիացիների մեծ հիացմունքին էր արժանացել բանաստեղծուհի և նկարչուհի Ջ. Բոյաջյանի տաղանդը: XX դ. 20–30-ական թվականներին նրա նկարների տասնյակ ցուցահանդեսներ էին կազմակերպվել Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և Եգիպտոսում: Նրա տաղանդի մասին գերմանացի Հանս Ֆրագստը գրել է. «Միսիս Բոյաջյանը առաջին ասիացի կինն է, որին պատիվ է վիճակվել իր արվեստի ստեղծագործությունները ներկայացնել համաշխարհային ցուցահանդեսում»⁶⁸:

АРМЯНСКАЯ КОЛОНИЯ В АНГЛИИ (1860–1920 гг.)

РУБЕН ЕГИАЗАРЯН

Р е з ю м е

Армяно-английские исторические связи начались еще в средние века, однако они носили лишь эпизодический характер. Образование же армянской колонии в Англии произошло гораздо позднее – в 60-х годах XIX в. В 60-х годах XIX в. окончательно формируется армянская колония в Манчестере, в 70-х годах – в Лондоне, а в 1916–1918 гг. – Саутпорте. Армянские общины в Англии, начиная с 80-х годов XIX в., стали принимать самое непосредственное участие в экономической и политической жизни как самой Англии, так и армянского народа; помощь английских армян своим соотечественникам была разносторонней и нашла отражение в крупных материальных пожертвованиях, а также в политической поддержке армян в борьбе за решение Армянского вопроса.

66 Նույն տեղում, Լոնդոն, Հ. II, №21, 1915, էջ 313:

67 "Massis", vol. II, №3, 1930, January, p. 69.

68 Հայրենիքի ձայն, 1972, №47, էջ 7:

ARMENIAN COLONY IN ENGLAND
(1860-1920)

RUBEN YEGHIAZARYAN

S u m m a r y

Armenian-English historical ties began as long ago as in the Middle Ages, but they had only episodic character. The organization of the Armenian colony in England took place rather later in the 60s of the 19th century. In the 60s of the 19th century Armenian colony in Manchester is finally formed, in the 70s it is formed in London and in 1916-1918 – in Southport. Beginning from the 80s of the 19th century Armenian communities in England took direct part in economic and political life both in England and also in the life of the Armenian people. The help to the Armenians of England from their compatriots was versatile; it was reflected in big material donations and also in political support of the Armenians in their struggle of solution of the Armenian question.